



ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԴԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Ք. ՏԱՐԻ ԹԻԻ 15

ՀԱՐԱՐ

Տ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԱՊՐԱՅԵՍՏՈՐՈՐ ԵՄԻՆՈՂՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՊՐԱՅԵՍՏՈՐՈՐ ԵՄԻՆՈՂՇՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶ

Փ. ՍԱՐԳԻՍՈՖ ԵՒ ԸՆԴԻ


Պաշտոն-Պարտ, Օռոդաթի-Պաշտ հաստատութեան դէմ, թիւ 16

(Տ. Ասադուրյան) شرکت مطبعه مطبعه - باب عالی جاده سنده نو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտ-Ալի ճառարանի թիւ 52

Հատոր 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամալն մեխանիկ
զը գտնուին

Մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

Սինկերի մեքենաները
կը գտնուին

- | | |
|---------|--|
| ԲՆԲԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵԻԻՏԱՐ | Չարը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը :



ՐԵԻԵԼՔ ՕՐԱՆ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գաւառներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. եւ օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ 50 ֆր. փառա: ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խնայեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խումբագրութեամբ եւ իր կարող աշխատակիցներով,

բով, առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին մէջ :

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՄԿՐՈՒ ԿԱՆԳԱՄԱՆԵՐԸ, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր եւ երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն :

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագրութեամբ է ուղղել Տէր Ե. Տնօրէն Գարեգին Էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մանուկի Ճատախի, ուր հաստատուած են թիւրքին տպարանն ու խումբագրատունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՂԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 15

ՇԱՐԱՐ

8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Օրուան մեր գրական հրապարակը որ, ատեն մը Սահարայի քար հանելու չափ ամուլ վիճակ մը ունէր, կ'ուռնայ, կը թեւաւորուի այնքան որ՝ կտտիպէ մեզ երկու խօսքով իրմով զբաղիլ պահ մը:

Մէկ կողմէն գիրքերու նորէն նոր հրատարակութիւնները, միւս կողմէ՝ չաբաթաթերթերու և օրաթերթերու խուռներամ գոյութիւնը անգամ մը եւս կու գան շեշտել թէ 1907 տարին գիրի ու գրքի տարի պարտինք կուզել:

Յ. Գ. Մամբրեան՝ Տէրոյնյ Պատուելին կ'ողջնցնէ, Մեծարինց՝ մուսաները կ'ողջունէ, Զիֆթէ-Սարաֆ՝ միամտօրէն իր արկածները կ'ամփոփէ հատորի մը մէջ, Պալենց գրատունը յորդոր կը կարգայ իր հատորներով ու պզտիկներուն կըսէ՝ «դուն պիտի ըլլաս», Ա. Փանոսեան՝ իր ոտանաւորներու հանգը մեր տրամադրութեան տակ ... պիտի գնէ:

ժօռ օրէն. Սմբատ Դաւթեան՝ հին և ժամանակակից բեմերուն առջեւ պիտի տանի մեզ, Իզմիրէն՝ Արշալոյսը ծագեցաւ. Փունջ հնամենի չաբաթաթերթը կ'ծկուեցաւ, կոկուեցաւ. Սիմօնիկ Ալաճաճեանի ձեռամբ, իբր յաջորդը իր սիրելի հայրիկին. Մասիս երկրորդ շրջանը թեւակոխեց, Արեւելք նոյնպէս, Մանգումէն որ թերթոններով ա'լ աւելի հրապուրիչ դարձուց իր թերթը, Սուրճանդակ՝ ճաքօ մը ըրաւ: Հապա Տարեցոյցները: Թէոդօրիկի Ամենուն Տարեցոյցը մեքենային տակն է, Հիւանդանոցինին համար կիւմանանք որ բժիշկները «սանկ կրնայ պտըտիլ» ըսած են, Հանրագիտական տարեցոյց, Պաղտատարեան տարեցոյց, Պապիկեան տարեցոյց, Պէրպլեհեան տարեցոյց, ... եան տարեցոյց, ... եան տարեցոյց, տարեցոյց, գիրք, թերթ, չաբաթաթերթ, վերջապէս գրական պօլլուի մը որ մարդ կը շուարի թէ որը գնէ, որը կարդայ և ... ո'րը ընտրէ:

Վաղն ալ բացառիկները պիտի ելլան, փքուռոյց ու լայնութիւնով, սանկ, նանկ, և սակայն հիմակուրնէ ըսենք որ մի եւ նոյն դէմքերն են զորս կարգալու ստիպուած պիտի ըլլանք ի յարգանս բացառիկին... բացառաբար:

X

Գրականութեան մօտ նուազն ալ, որ միշտ անբաժան կրնա՞նք, շատ բարձր ու գոհունակութեան արժանի վիճակ մը ունի այսօր: Ամէն օր որ նոր քօնսէսներու գովեստը կը կարդանք թերթերու մէջ, և անոնցմէ զատ պէտք է ըսել թէ կան, ունինք այնպիսի կարող արուեստագէտներ որոնք «քանքարաթագոյց» ներ են, առանձին աշխատող և իրենց տաղանդը փայլեցնելու քաշուող անհատներ:

Սինանեան եղբայրները ամէն օր ամէն ժամ իրենց տաղանդը ցոյց կուտան թէ նուազահանդէսներու և թէ ընտանեկան բարձր շրջանակներու մէջ: Ալիքսանեան Տիրան Պէյ, կատարեալ virtuose մը, իր յատուկ քօնսէսովը անգամ մ'ալ շեշտեց «լիօլօն»-ի չաստուածը՝ մակդիրը, Ս. Բաբելեան՝ թէեւ չի մասնակցիր ընդհանուր գեղարուեստական շարժման, սակայն չի դադարիր տաղանդ մը ըլլալէ և պատիւ մեր համայնքին: Մըսըրլեանի համար ալ կըսուի թէ Նարօլիի մրցման մասնակցելով՝ ոսկի միտալ ստացած ըլլայ, բայց չենք գիտեր թէ որ աստիճանի ստոյգ լուր մըն է այս, ամէն պարագայի մէջ կը փափաքինք որ զուրցուածները ստոյգ ըլլան:

X

Գալով թատերականին, պէտք է ըսել թէ՛ ան ալ ուշագրաւ փոփոխութիւններ կրեց վերջերս: Պապա Մնակ, ինչպէս սկսած են կոչել զինք, իրեններուն մէկ մասովը Ռոտտօթոյ մեկնած ըլլալով, մնացեալներով հոր, Ահմէտ Ֆէհիմ էֆէնտի (որուն լուսանկարը տեսաք մեր անցեալ թիւին մէջ) նոր կատակերգակ խումբ մը կազմելով գեղեցիկ debut մը սկսած է ընել, իր հետ ունենալով՝ Վ. Շահինեանը, Ե. Թօլայեանը, որոնք կատակերգութեան ռօլերուն շատ վարժ ըլլալով՝ աջ ճազուկը եղած են նորակազմ խումբին կարող վարիչին, իսկ Տիկ. Հէքիմեան ու Տէր

և Տիկին Պինէմէճեաններու համար, անոնք որ վարժուած էին լացնելու ժողովուրդը, հիմա, այս նոր թատերական ասպարէզին մէջ պիտի ջանան արցունքը ժպիտի և քահքահաներու փոխել, որուն համար կրնանք ըսել թէ պիտի յաջողին, քանի որ իրենք կատարեալ արուեստագէտներ են և թէ իրենց համար ամէն ուր գիւրդին պիտի գայ:

Թատրոնի և նորակազմ խումբին վրայ խօսած ատեննիս չենք ուզեր անտեսել պարագայ մը որ շահեկան է:

Կարգ մը նորուկ երիտասարդ amateur-ներ կը փափաքին մուտ գտնել այս նորակազմ խումբին մէջ, և արդէն Տնօրէնութիւնը կոչ ըրած է այս առթիւ, և այդ կոչին անձամբ պատասխանողներ չեն պակսած: Սակայն պէտք է գիտնալ որ, ձգենք դերակատարութիւնը որ տարիներու փորձառութեան կը կարօտի, նոյն իսկ բէմի վրայ պարզ քալել մը գիտնալու համար առ նուազն երկու տարի եթիւս ընելու է:

Դերասանութիւնը, պզտիկ բարեկամներս, ծնունդ է. Կարմիրեանն ալ Մնակեանի թեւերուն տակ շատ տարիներ մարզուեցաւ, բայց ի վերջոյ երբ բեմ ելաւ դեր կատարելու համար, գիտէ՞ք ի՞նչ ուր առին,

— Միւսիւ գօնթ... առապա հազըր...:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

ԱՄԷՆՈՒՆ ՓԱՓԱՔԱԾԸ

ԱՄԷՆՈՒՆ ԽՆԴՐԱԾԸ

ԱՄԷՆՈՒՆ ՍՊԱՍԱԾԸ

ԹԵՌԵՐԻԿԵՆ ՅՈՒՆՈՒԱԾԸ

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԵԱՆԷՆ ՏՊՈՒԱԾԸ

ՄԷԿ ԵՐԿՈՒ ՕՐԷՆ



Մեր երբեմնի կարողագոյն զաւեսագիր-
ներէն՝ Անսօն եֆ. Սագայեանի, Արսօնաճեհ
Ծաղիկ մանկանց շարաքարերին, մեկ գե-
ղեցիկ հասուածը հրամցրնելով մեր ընթեր-
ցողներուն, կը յուսանք քէ զաղափար մը
սուած կըլլանք ասկէ առաջ գրուած զաւես-
ներուն ձեւին նկատմամբ :

ՇՈՂԱԿԱԹ ԽԱԹՈՒՆԸ Ի ԲԵՐԱ

Պոյսոյ հեռաւոր թաղերէն, ըսենք Սամա-
թիոյ կամ Նարլը-Գաբուի կողմէն, քանի մը
տիկիններ անցեալ օր Բերա կ'երթային, Ծը-
նընդեան առթիւ զգեստ եւայլն առնելու և
մանաւանդ գլխարկ կապել տալու : Այս ու-
ղեւորութիւնը այնքան մեծ խնդիր մըն էր
մեր տիկիններուն համար, որքան մեծ խն-
դիր չի նկատուի երկրախոյզ մը, երբ հեռաւոր
երկիրներ ուսումնասիրելու համար ճամբայ
կ'ենէ : Բերա նոր աշխարհ մըն էր իրենց
համար : Ուստի ճիշդ ուղեւորի մը նման, որ
օրինակի համար, Բարիզի փողոցները պտը-
տելու համար առաջնորդի մը պէտք ունի,
մեր Սամաթիացի տիկիններն ալ Զըթըփը-
թենց Շողակաթ խաթունէն խնդրեցին որ
իրենց առաջնորդէ :

Սամաթիայէ մինչեւ կամուրջ ասոնց ու-
ղեւորութիւնը տեղի ունեցաւ առանց ունէ
արկածի, որոնք կամուրջէն անդին պիտի ե-
րեւային :

Ասոնք էմին-էօնիւի բազմամարդ հրապա-
րակէն առանց կորսուելու յաջողեւր էին կա-
մուրջը գտնել : Բայց Գարաքէօյի հրապա-
րակին մէջ, կառքերու, մարդոց, սաքրնի-
ներու, ստահակներու բազմութիւնն ա'յնքան
մեծ էր որ նոյն իսկ իրենց առաջնորդը շփո-
թեցաւ, ու այսպէս

Զըթըփըթենց Շողակաթ խաթուն

Փիւշման եղաւ դուրս ելլալուն,

Ինչպէս պիտի տեսնուի հետեւեալ պատմու-
թենէն :

Շթայնի վաճառատան առջեւ երբ հասան,
իրենք որ նախ և առաջ Ս. Լուսաւորչի ե-
կեղեցին ուխտի պիտի երթային, փոխանակ
աջերնուն դառնալու, դէպի ձախ դառնալով՝
Բէրչէմպէ բազարի ճամբան բռնեցին : Երբ
տեսան որ սխալ ճամբայ գացած են, ետ

դառնալով Շթայն վաճառատան առջեւ կե-
ցան :

Շողակաթ խաթուն՝ այդ վաճառատան
առջեւի մոմէ արձանները կենդանի մարդիկ
կարծելով, հարցուց անոնցմէ մէկուն .

— Գուզում սինեօր, Ամենայն Փրկիչէ
նէ՛րտէն կիտիլիր :

— Մեղայ, ճուղապ պիլէ չի տուաւ :

— Քա՛, զայեք Ամենայն Փրկիչ ըսիր, տէ
չհակցաւ, սա քովի կայնողին հարցունէիր,
ամմա էրմէնի քիլիսէսի ըսէ :

— Աղէկ ըսիր, քա գուզում չէլէպի,
էրմէնի քիլիսէսինէ նէ՛ թարափտան կիտիլիր
աճապա :

Միշտ զաքարիական լուրթիւն մոմէ ար-
ձաններուն կողմէ :

— Աստուծու աչկին մեռնիմ, անձախ մե-
րիններն են քի երկու ձեռքներն ճէպէրնին
սըլըք սըլըք կը պտըտին : Լեզու չիյաէն ամա
պանի դործի են անցեր :

Շողակաթ խաթունին բարեկամներէն Սի-
մա տուտուն ալ որ Ամենափրկիչ կ'երթար,
Շթայնին առջին Շողակաթ խաթունին հան-
դիպեցաւ .

— Պարի լուս, Շողակաթ տուտու, տուր
ծառքդ պաղնեմ, ո՛ւր ես ելեր ասանկ կա-
նուխ բազմութիւնով :

— Ապրիս մնաս, ախճիկս, Ամենան Փըր-
կիչ պիտի երթամ, անկէց ալ սա կէնձէրը
չաբխա կապել պիտի տան, Ծընունդվան հա-
մար ալ ֆիստանցու պիտի առնեն : Քա՛,
չես ըսեր քի ճամբան չաչըմիշ ըրի . սա
կայնողներուն կը հարցունեմ, ասոնք ալ լե-
զու չիյտե՛ն, ի՛նչ են, ճուղապ չեն խտար :

— Վո՛ւյ, աչկդ խաղա, կընիկ, քա՛,
ասոնք սուտտանմէտէ մարդիկ են :

— Հա քա՛, մեղայ, կը նայի՛ս հէլէ, քա
ես քեզի պան մը ըսե՛մ, քուրուկ, սուտ-
տանմէտէ մուտտանմէտէ ամա, մեր Պեղիկին
տըղէն շատ չընորքով են :

— Կէնէ թօհաֆ թօհաֆ կը կըլտորես կոր,
էկէք սըկէց քիչ մը պօղաչա ուտենք :

— Ուշ կը մնանք օրթի, խաչանկիստին
չենք հասնիր :

— Տահա ո՛ւր ես, պատարագի պիլէ մը-
տած չեն :

Ինչ եւ իցէ չերկնցնենք, ասոնք պօղա-

չաճիին խանութը մտան, և քիչ մը պողպատե լուռի է վերջը Ամենափրկիչ ուխտերնին կատարելով՝ չիտակ ճամբայ ելան գլխարկ կապելու և ֆիստանցու առնելու համար: Բերա պտրտած առնենին, մեծ պողոտային վրայ Գարլըմանի վաճառատան առջև կայնած թուքերնին կլելով իրարու հետ կը խօսակցեին:

— Քա՛, Անթառան տուտու, աս ի՞նչ աղուոր տեղ է, սա ալլըման հաֆիսէները նայէ, սա մարդու պոյ աջաները, մարդ մէջը նայի նէ՛ մէյմը մէյմըն ալ կը ցուցունէ կոր, քա կիտես քի արքայութիւն կըլմանի:

— Վո՛ւյ, քանի կը նայիմ նէ, պերսիս ճուրբը կը վազէ կոր, աղջիկ կարգելու, ճէհէզելու համար իշտէ թամ մաղաղա է, ամա մեզի պէս մարդիկները դուռնէն ներս պիլէ չեն կրնար մտնար:

— Քա՛, ի՞նչ կըսես տուն ալ, ան մեզի պէսներուն չէ յի, տէյմէ գէնկինի կնիկներուն պանը չէ հոսկէ ներս մտնալը: Սա նայէ՛, խանութին մէջ քսան եռսուն հոգի շլէսթա կեցեր են, եկած միւշտէրին տուգախը ձգելու համար:

— Քա՛, Շողակաթ տուտու, հոսկէ ներս մտնող առուտուր ընողը, ունեցածը չունեցածը հոս ձգելէն զատ, տունին հէօճէթն ալ ըրէհին դնելու, անանկ դուրս ելլալու է:

— Ան տահա, իպրաքսէ հանրմ, տուն իլք հեղուն է քի հոսկէ կանցնիս կոր:

— Էլիմօնեա հանրմին տունը Պէյօղլու է տէ, անցած օր մեզի եկաւ նէ, աս մաղաղային համար անանկ պաներ պատմեց քի, մարդուն պերնին ճուրբը կը վազէ:

— Քա՛ աճապ որի՞նն է աս մաղաղան:

— Անլըմանին մաղաղան կըսեն եղեր:

— Տարիին երեք հարիւր օրն ալ, ամէն օր մէյմէկ չէչիտ մօտա ֆիստաններ կը կախէ եղեր, մաղաղան գտնուած խումաչը պաշխա մաղաղաները տակնուվրայ ընես նէ չես կրտնար:

— Քա մնա՛յ, էյէր պաշխա տեղ գըտնուած մալը հոս պերէն նէ հիչ խտար կընէ: Հիչ մէկ տեղ մ'ալ գտնուելու չէ քի, ինչ որ ուղէ նէ տան տէ առնեն: Աս մաղաղային տմիւր հարիւր հազար դուրո՞ւշ կերթայ, ի՞նչ կըլլայ աճապ:

— Քա աս բարաները ուրկէ՞ց կը կտնան. չօգ չէ՛յ ... շատ պան:

— Չէ՛, Իսկուհի հանրմ, անցած օր Իլիմօնեա հանրմը պաներ պաներ պատմեց քի, բիւթիւն հայ ամիրաներուն կնիկներն են եղեր աս մաղաղային միւշտէրինները:

— Ա՛խ կիտի գէնկինութիւն. հիմա մենք ալ ճէպերնիս տօլու լիբա ունենայինք նէ, հիչ չէի կենար, սա Սօֆիցայիս խաթ մը լաթ կ'առնէի հոսկէ:

— Քա տուն ալ, տօնսուղուն աղլընտան կիւնտէ իւչ արշըն պէզ կէչէր կ'ըսեն նէ՛ անոր պէս ալ ելեր մայիլիւլեաներ կ'ընես: Մենք ասկէ պան առնել չէ քի, չիտակը ներս նայելու պիլէ կը վախնամ կոր:

— Աման տուն ալ, ի՞նչ կայ վախնալու, մէյմը ներս մտնանք տէ սէյիր ընենք աճապ:

— Քա, ի՞նչ կըսես դուն ալ, իսկըի՞դ եկաւ ի՞նչ եղաւ, աս քսան եռսուն ճահիլ մարդիկը վրանիս պիտի խնտացունենք:

— Ո՛ւյ, բէք թօհաֆ ես, Բերրոն, մէկալ մաղաղաներէն տանքիմ շատ մալ առինք տէ, հոսկէ պան չառած դուրս ելլելու կամ մըշնաս կոր:

— Տո՛ւն ինչ կըսես, Շողակաթ տուտու, քեզի տանըմիշ չեղած մենք պան մը չենք ըներ:

— Մեղայ, բէք թօհաֆ էք, քա օլտու օլաճաք, ասոր պտրտելով, սէյիր ընելով օրերնիս օր ընենք երթայ, պարէ էօմրէրնուս մէջն ալ պան մը տեսած ըլլանք:

— Քա՛ Շաղիկ, մատամը նայէ, ան ի՞նչ անլըման չաբխայ մը տըրէր է, եանի բարա ունենայի նէ հատ մըն ալ ես չընեկ կուտայի:

Այս միջոցին կառք մը կեցաւ վաճառատան առջև, և աղնուական տիկին մը վար իջաւ:

Սպասաւորները դիմաւորելու համար վազելով դուռը եկան, ուր կը գտնուէին մեր տուտու խաթունները:

— Պուեուրուն, մատամլար իչէրիյէ, հէր պիր չէչիտ մալ վար պիլդ. բէլէրին, մանթօ, ֆիստանիք, ֆանէլա:

— Քա սալոր ուրումիլդտէն մը հարցունէիք քի, չարապի իւթիւնէ ֆիստանիլդ վա՛ր մը տէյի:

— Գուշում սինեօր, չարապի իւստիւնէ ֆիստանլըղըն վա՛ր:

— Աղնատի պէն, սիզ պաշկա մաղապա կիտին:

— Քա չարապի ըսիր տէ չի հասկցաւ, պաշկա կաղինօեա կիտին կըսէ:

— Կենանք նայինք, արապայով եկող կնիկը ինչ պիտի առնէ աճապ:

— Քա ի՛նչ կըսես, օրը իրինկուն եղաւ, ես տահա տուն պիտի երթամ կերակուր վըրայ պիտի տնեմ օր էրիկա կայ նէ կռիւ չի հանէ:

— Ես ալ տահա պան մը չեմ եփած ամա, զարար չունի, աս գիշեր ալ չորեղէններով կանցընենք:

— Զաթը իմինս ալ գիշերը սահաթը երկուքին քէօր կինով կելլայ կուգայ, ծուկ կը պերէ քի տապկէ տէյի, ես ալ կէս եփած կէս չեփած առջին կը հանեմ որ չափուխ մը ուտէ տէ երթայ շնթուկի պառկի. ես ալ կելլեմ դրացնութեանը Մարտիկ աղային կ'երթամ, գիշերը էլէնմիշ կըլանք:

— Ես ալ պազի պազի Արթին աղայէնց երթալ տէ աս էրկան գիշերները էլէնմիշ ըլլալ կուղեմ ամա, իմինս խըրչը մարդ մըն է. ինքը տեղ չերթար, ինծի ալ մինակ երթալու չի թողուր:

— Իմ էրիկա ատանկ ըլլայնէ ես սահաթ մը չեմ կենար, կը թողում:

— Ես ալ սանքի փէք խելօք չեմ կենար ամա, տունին կէսը իմ վրաս դարձունելու խօսք կայ տէ, ատոր լմնալուն կը պէքէյէմ կոր:

— Քա, ի՛նչ կըսեն հիմա անցնող դարձողները:

Այս միջոցին դարձեալ սպասաւորը գուռը գալով:

— Նէ՛ տիռ պու, պիռ սահաթ վառ պուռաւ տուռումը տիռափռ էտէիօռսունուղ, չապուկ տէ՛ֆ օլուն սունտան, սիզէ կէօռէ տէյ եօգ պուռաւ:

— Մըրսի վըրա՛դ, խանութունը եէմէափք ա՛, սէյիք էտիօրուղ: Հայտէ քա՛, սահաթ մը առաջ տեղերնիս հասնինք. սա նայէ, պառաղիճէ մեզ վըրընտեցին:

Ասոր վրայ մեր տիկիններն ալ զատուեցան ֆարլըմանի վաճառատան առջեւէն, ա-

ռանց բան մը առնելու. և մինչեւ որ տուներնին գացին իրիկուն եղաւ: Որ մէկուն էրիկը քիչ վերջը կուգայ, կը նայի որ կերակուրը չէ պատրաստուած, կռիւ մ'է կը փըրթի, մէկ քանինըրը էրիկներնէն ծեծ կուտնան գիշերը: Մէկուն աղջիկն ալ, մայրը հօրը ձեռքէն աղատելու համար, պատուհանը քացածին պէս որչափ ձայն ունի «եանկըն վար» կը պօռայ, թաղեցիք կը համարն, իրարանցում մ'է կը փրթի, մինչեւ իսկ եկեղեցիին քուլումպան կը վազէ կուգայ:

Ա. ՍԱԳՍԵԱՆ

ԿԱՆԱՑԻ ԽՈՅԵՐ

— Կիներ կենաց աղբիւրն է, ուրկէ երիկմարդը իւր ծառաւած Երբները կը քոչէ:

— Կիները պսուղներ են, որոնց շատ եղածը անհամ կ'ըլլայ, իսկ հասն ալ . . . նուազ սննդաւոր:

— Անառակ կնկան պատշամունքը շահ եւ վասակը՝ պչրանք ու պերճանքն է միայն:

— Անբարոյ կիները, լոկ այլ մարդոց մաքուր զգացումները պղծելու համար ծնած են կարծես:

— Կիներ կան որոնց իւրաքանչիւր նայուածքը սպառնալիք մը եւ իւրաքանչիւր բարեհաւուած մ'է երիկմարդուն:

— Թեթեւաբարոյ կնոջ մը սէրը լաւդի շիւղի բոց մըն է:

— Կիներդ ո՛չ գովէ եւ ո՛չ ալ պարսաւէ հրապարակաւ:

Ձի գնահատուող կին մը, ուրիշները չգնահատող կին մըն է:

— Կնոջ սիրտն ու հոգին իւր աչիւրեհն դուրս կուգան:

— Կիներ կան որոնք կը կարծեն քէ սուկը ամեն բան կ'ընէ եւ անոր համար է որ սուկի համար ամեն ինչ քնելու տրամադրութիւն ցոյց կուտան:

— Գեղեցիկ կիներ կան որոնք միմիայն սիրուելու համար գեղեցիկ ծնած են, վասն զի երբեք չեն սիրեր:

Վ.Ա.ԶԲԱՄ ՍԵՎԱՏԵԱՆ



ՀԱԻԿԻԹԻՆ ՄԵՋԻՆԸ

[ԶԻՊՈՒՅՍՐՈՅՐ ՅՕԴՈՒԱԾ]

(Շար. ԷԼ ՎԵՐԶ)

Խեղճ մայրը, իր տիպար զաւակին առաջին յաճախորդութիւնն ի տես՝ այնքան դող կ'ելլայ ուրախութենէն որ, կերած բռասայով միսը մինչեւ կոկորդը մէկ երկու անգամ կ'ելլայ կ'իջնայ, ու հայրը՝ Միքայէլ աղա իր կարգին, ան աղ դող կ'ելլայ, մտածելով թէ արդեօք հեղ հիւանդը ի՞նչ անուր փորձանքներու պիտի հանդիպի շնորհիւ իր անփորձ զաւակին. իսկ գալով մեր ծանօթ հաւկիթին մէջիւնին, չոզենաւէն հազիւ ելած թէ չէ իր ատուէսին, լաւ է ըսել իր բաղուկներուն և փայլուն գործիքներուն դիմող այդ նորեկին հանդէպ ուրախութենէն չորս անգամ վեց ոտք վալս կը դառնայ սենեակին մէջ, ու հայելին դէմ կսկսի պիտերը ալ աւելի վեր տնկել մոլտալով մաշիչը:

— Պօյրդ սիրեմ ես վրուս, խըսմէթդ օտքիդ եկաւ, կնիկը օվուն օվուն կուգայ կոր վարը, ի՞նչ կըսես ...

— Պօ՛ն, ըսէք ող սալ տ'աթանդը սպասէ քիչ մը ... կըսէ միւսին շարունակելով իր պիտերը ոլորել:

— Նասը՛լ սալաթա ես վրուս, քսանը չորս սահաթ է պերանը փշրանք չէ դրեր զավալըն ...

— Շատ աղէկ ուղեմն վեղ բեղէք, անգամ մը տեսնամ, բայց հոս եղիւ լամբ աւելի վաղեցէք ողպէս զի կաղենամ աշխատիլ ...

— Քա զաւակս գիտես քի շատ լամպա չունինք, երթամ իտարէն ալ վառեմ տէ նայած վախառդ պերնին մօտիկը կը պոնեմ, ջըլամ ...

— Լաւ, լաւ, ըսէք ող հիւանդը վեղ գայ:

Խեղճ հիւանդը անտանելի ցաւերու մէջ վեր կ'առաջնորդուի:

— Նէմուտու քեզի քուրուկ, կըսէ մայրը հիւանդին, նէմուտու քի զաւակս եկած գիշերը ցաւդ պոնեց, հիմա թաքիքէին մէջը դանակի պէս կը կըյրէ ...

— Ամա՛ն ... իլիկներս կը քակէ կոր աս շան զաւակ ցաւը, չէ քի տիշի, նալպանտըլայ նէ պերանս թէպիմ պիտի ընեմ ...

— Ես վրուս տահա հիմա չանթան պապաւ տէ բառլախ էլաթները դուրս հանեց, բիւթիւն խառղայի կտուցի պէս աճալ տճալ յիպ բաներ ... իշալլահ մէկ ծանով կաղատիս ...

Ու հիւանդը միւսին սենեակէն ներս կը մտնայ ...

— Աման տօքթօն չարէս, կը մեռնիմ կը մեռնիմ տիրիլմիշ կըլլամ կոր, սահաթ մը առաջ ինչ պիտի ընես նէ ըրէ ... կըսէ կինը լալաքին:

— Պօ՛ն, ֆօթէօյ մը բեղէք ...

— Համմէ՛ ...

— Աթող մը բեղէք, կըսեմ ... խօսք կառնէ տանթիսդը ձեռքերը շփելով:

— Աղոթիլ ալ տուի տօքթօն, փարայ չըրաւ, քէլքէթին եաղի կուղէ ... կըսէ հիւանդը:

— Կեցէք հիմա ձեզի պիտի զբօզէ ընել տամ, ըսելով հոն գտնուած խտր աթոռի մը վրայ կը նստեցնէ հիւանդը ու,

— Ուվղէ վօթղը պո՛ւշ ...

— Քա չեմ հասկնար կոր ամա, ըսէ քի

պալըն չեմ կերեր քի մէջը փուշ մտեր է կըսէ հիւանդը ...

— Պուշ, պուշ, բեղաննիդ բացէք կըսեմ ...

— Հա՛ ... էյ նա՛, ի՞նչ գիտնամ փուշ հասկցայ ըսելով կինը բերանը կը բանայ ու կսպասէ որ միւսին իր քննութիւնը կատարէ :

— Էնֆլամմատիոն, տա՛ն բուղղի, իլֆօ լճաղղաչէ սան բէղտղը ախ թան, տօնք քօմ մանսօն ... ըսելով ժաքէթը կը հանէ ու կսկսի գործիքները հանել :

— Ոտքդ պագնեմ տօքթօն քաչե՛ս պիտի ...

— Հիմա, վայղկենական կեղպով պիտի հանեմ ձեզ ակղան, ող չողս զասին ունի ...

— Քա չորս ի՞նչ ունի ըսաւ ...

— Չորս չաթալ ըսել է այլահալէմ ... կըսէ մայրը, աման եավրուս ես սընըըը եմ չեմ կընար քովերնիդ կենար ...

— Ոտքդ պագնեմ քուրս, իս մինակ մի ձգէք, դող կելլամ կոր ...

Նոյն ատեն միւսիւ հաւկիթին մէջինը փալուն գործիք մը ձեռք առնելով օդին մէջ մէկ քանի անգամ կը դարցնէ և մէկ ոտքի վրայ կը դառնայ սննուկին մէջ :

— Աման եավրուս, գիտնալս տիչճիները քէլքէթինը հիւանդին աչկը չեն կոխեր, աս դուն հաներ ես քուքլայի պէս մատներուդ վրան կը դառցունես կոր ...

— Այդ տեսակ բանեղ պէղպէղները կընեն մայր, մենք չիղիւղօիէն տանթիսդնեղս, աղանց ցաւ զգացնել տալու աղղաչէ կընենք, իմէտիաթման ...

— Աման ... աղոան ... կը մեռնիմ կոր, կը ճգայ խեղճ կինը :

— Հիմա, բացէք բեղաննիդ, ըսելով մինչ գործիքը բերանը կը դնէ, մայրը ձեռքի կազը ձգելով դուրս կը փախի :

— Ա՛ ... ա՛ ... ա՛ ... ա՛ ...

— Չա՛թ ... սարղէսթի ... անքօղ ...

— Նա օղլում թէսթի կուղես նէ ճուրով լեցուն դրած է կը ձայնէ մայրը դուրսէն ...

— Ա՛ ... ա՛ ... ա՛ ... ա՛ ...

Երկրորդ անգամ կը փորձէ :

— Բօղքա միղէղա՛ ...

— Պէ եավրում կէչ մըսէր, կը զուս կը-

սես կոր ամա, կնիկը ցաւ կը քաչէ կոր ... կը մուտայ դրանը մէջէն էպրոս :

— Քա քուրուկ հասէք, պերանս չարչամպա բազարի դառցաւ ... կը ձայնէ հիւանդը այն պահուն, մինչ միւսիւ տանթիսդը երրորդ անգամ գործիքը բերանը կը խոթէ :

— Հիմա տիկին, թութ ա լէօլ մատամ ժը ղէիւսիղէ :

— Ա՛ ... ա՛ ... ա՛ ... ա՛ ...

— Չաթ, այս անգամ ակուային մէկ մասը միայն ձեռքը կը մնայ, մինչ կինը անդադար կը պոռայ անտանելի ցաւերէն նեղուած :

— Քա ելա՛ւ, ելա՛ւ ... աչկդ լուս, ֆիտան զաւակս, ինտոր ալ քաչեց ...

— Մէկ դասինը հանելի, բայց միւսինը հիմա պիտի հանեմ, ըսելով երբ կրկին գործի պիտի սկսէր,

— Աման ... չեմ ուզեր միւսիւ տօքթօն, մնացած քէօքերն ալ պէռպէռ խուկասին քաչել կուտամ ... կըսէ լալաքին խեղճ կինը, որուն բերնէն յորդառատ արիւն կը հոսէր :

— Հիմա, հիմա, բացէք, մէկ անգամէն պիտի աղնեմ տիկին, բացէք ...

— Պէ ճանըմ, նէ բերնիս վրայ շնորհք մնաց նէ ալ վրաս հալ, կեցիր սօլուխ առնեմ, քա էօմրիս մէջը ասանկ ցաւ քաչած չունէի, վեց հատ չօճուխ եմ բերր, մեղայ քի ասանկ տէվէ պաղըռտան ցաւ քաչած ըլլամ ...

— Քուրիկս, այրպլամիշ մընէր, ողաս տահա երկու սահաթ է քի վարօռէն ելաւ, ծանէն, խօրաթայէն ալ չես հասկնար կոր, նէվաղիլ է, պէլքի անոր համար ասանկ եղաւ, մէյմը տահա ցաւելու ըլլայ նէ իշալլահ թէզվարի կը հանէ, կըսէ մայրը :

— Չօք չէյ, նէվաղիլը ղէնահաթին հետ ի՞նչ կապ ունի, նէ իսէ մէյմը պէրանս պաշած գտնուեցայ ...

— Ալօն, ալօն, բեղաննիդ բացէք ող հիմա պիտի քաչեմ, ըսելով կրկին կը մօտենայ :

— Ա՛ ... ա՛ ... ա՛ ... ա՛ ...

— Օ՛հ ... ալա պօնէճօղ ... չուտ քիւվէթ մը բեղէք ... կը պօռա տանթիսդը հանած ակուան ձեռքին մէջ զորճնելով :

— Ելա՛ւ, էլա՛ւ ... կիւ վէրթէ՛ն ինչ է ետա՛րում ...

— Դիւ վէթ, քիւ վէթ, ողպէս զի թուքն է ...

— Հա՛ ... էյ ուղղուն բան մը չունիմ օրդտի ... նա աղապալին էօռտէկը կայ, ըսելով աման մը կը բերէ, մինչ խեղճ կինը արիւնկուա վիճակին մէջ մահուան քրախնքներ կը թափէ:

— Էհ, աշկղ լուս քուրուկ, տեսա՛ր, չըսի՛, մէկ ծանով ազատեցար ...

— Ընհ... Ընհ... Ընհ... լինտէրս... բերանըս ... աղղըներըս ...

Տանթիսդը իր գործիքը մաքրելով կը զբաղի, կինը բերանը կը լուայ, մինչ Միքայէլ աղա կինը կանչելով,

— Քա էպրո՞ս ... չէնեէն տեղէն հանեց ինչ ըրաւ, կընիկը բէք կը տքայ կոր ...

— Մեղայ ըտէ, տէր ողսրմեա՛յ ... Թամամ վեց քէլթիւն զարկաւ, հէ՛մ ալ չորս չաթալ է եղէր ...

— Ես ան աս չիտեմ, կընիկը էօլիւմին հեռ բէնչէլէ՛միչ եղաւ ներսը ...

— Անոր համար քի տղաս ջուրերուն մէջը չի մնաց, հիմա խալլու տաքցունեմ տէ կունակին պիտի դնեմ, ան չէ ես աս կընիկէն ինչ ուզելու է Միքայէլ աղա՛ ...

— Ինծի կը հարցունես նէ բան մը ուզեւիք կայ նէ ներողութիւն է, չիւնքիւ աս հալը դուրս ելլայ նախ ընէ նէ համալ կապոսը պիլէ պերանը առջին չի բանար ...

— Դուն մի խառնուիր, ես գիտեմ ընեւիքս ըսելով տիկինը դուրս կելայ, մինչ հիւանդ կինը անտանելի ցաւերու մէջ մեկնելու կը պատրաստուէր:

— Կերթա՛ս կոր քուրուկ, մէյ մըն ալ չի տեոնաս իշալլահ, իշտէ տեսա՛ր ես տըղուս մէհարէթը, ծանրդ հասած տեղը նախ ըրէ ...

— Էյ իրաւ քի ատանկ պիտի ընէի ամա, մատս բերնիս մէջը դրի նայեցայ քի, ցաւած աղուս քիւթիւկի պէս դրած է, քովի սաղլամը քաշեր է ...

— Քա անոր համար ետա՛րում ատտար իսկէնճէ քաշեց ... հա՛, սանկ ըմէ, չէնէ չիւրիւկ ըլլար նէ չըբըն իշի կը քաշէր ...

— Էյ չէ ... աշկա ելլայ, կիւզէլիմ աղ-

ուս վրայ տուի ... ըսելով մինչ խեղճ կինը սանդուխներէն վար կիջնար յուսահատ, Տիկին էպրոս ետեւէն,

— Ան խուռնազութիւնները մենք կը հասկնանք, վիզիթա չիտաս տէյի տղուս զէնահաթին մահանայ կը գտնաս կոր ... զարար չունի, զաթը ամիս մը խայրաթ պիտի նայի ...

— Քէշկէ տէրտիս տէրման ըլլար տէ փարան տայի, պաշ առղաս վրայ տալէս ետքը, չիւրիւկին ցաւը կէնէ պէյիս մէջն է ...

— Բաղտօն մայղ, ինչ է, ինչ կուզէ կո՞ղ ... կըսէ միւսին վրայ հասնելով:

— Հիչ ետա՛րում, կէօյեամ քի սաղլամ առղան հաներ ես տէ չիւրիւկը տեղը մնացեր է ...

— Բառ պլէօ ... քոման, ես աղաւն չի հանեցի ... սաքղէ նօն տը թօննէ՛ղ ...

— Խըռս մ'եկար ետա՛րում ծանրդ զաթը տառցեր է, արունդ ալ կը տառնայ, փախեր եմ թէփէն, խենդ խըռփիկս պէս թող պերանը առջիդ չի պանար, թող մատովը ցուցունէր չիւրիւկը սաղը ... հայտէ տէօշէկդ ձգեմ տէ ըռահաթ ըրէ ըսելով՝ մայրը իր տիպար (.) զաւակը կը տանի կը պառկցնէ ու ինք վար կիջնայ ամուսնոյն քով:

— Քա էպրո՞ս ... կնիկը սաղ սէլիմ դուռնէն դուրս ելա՛ւ ...

— Հապա՛, Աստուած պիլէկին խու վէթը էվէլցունէ, տիւր տիրի աղուս սանկ ուստալըլը մը հանեց քի ...

— Ուստալըլը ըսածդ, ես անանկ գիտցայ քի կնիկը չօծօխ կը բերէ կոր տէյի, անանկ ճանկ կը պողար կոր ներսը ...

— Կնկան ետա՛ղաւ ... աման ես գիտեմ ես, բառախ տէլիսանըն տեսա՛ւ նէ սընըրները թուլցան, ան է ...

— Ինծի նայէ կնիկ, ես աս տղուն զէնահաթին կիւ վէնմիչ չեմ ըլլար կոր, աս պիրիւնի բոսվային կնկանը սաղ աղուս քաշեց, իքինճիին մէկուն չէնեէն տեղէն կը հանէ, իւչիւնճիին էկէր մէկն ալ եօլճի ընէլ նէ ...

— Դուն ալ իս մտիկ ըրէ, աս կէնճութիւնը վրան կայ իքէն, ինքը ետա՛ղըլըլը ըլլալիքէն, ծառքը քէօռ թօքալ զէնահաթ

մը կայ իքէն, լեզուն պերնին մէջը ֆուր-տախ իքէն, հիմաճուկուն աղջիկներն ալ էրիկ տէյի վրայ իարայ տալնիքէն, տղուն մէկ քիբրիկին զիյան չիգար, դուն հոգդ պիւէ մընէր . . . :

Այս մասին իրաւունք ունէր :

* * *

Ամիս մը շարունակ այսպէս իր չօլբազ արհեստը ի գործ դնելէն, թէեւ մէկ եկողը երգում կընէր անդամ մ'ալ ոչ թէ ակուն քաշել տալ՝ այլ նոյն իսկ վրան բամպակ մը իսկ դնել չտալ, սակայն և այնպէս մեր հաւ-կիթին մէջինը չնորհիւ իր պիղ պիտերուն և երիտասարդ թարմութեան, ամէն օր յաճա-խորդը պակաս չէր տանը մէջ, և նոյն իսկ ակունայի ցաւ չունեցողներ դիտմամբ վրան անուշ կը բռնէին որպէս զի անգամ մը միւ-սիւ Պաթիսդին դիմէին . . . :

Կիրակի օր մը կէս օրէն վերջ կո՛ւ . . . ո՛ւ . . . ո՛ւ . . . քուբէ մը կեցաւ իրենց տանը մօտ, ուրկէ Տիկին մը վար իջաւ :

Տիկին էպրոս այս եռուոտ յաճախորդու-հիին ի տես՝ անմիջապէս դուռը վազեց, և ժպտուն դիմօք դիմաւորեց զինքը :

— Էսքը մէսիէօ լը տանթիսթ է'թ իսի՛, կը հարցնէ Տիկինը, մէճիտնոց վուալէթին տակէն :

— Տիչճի գաւակս կը հարցնէ՞ք . . . հա-պա ո՛ւր պիտի ըլ այ, միւշտէրիէն կլոխ ա-ռած չունի քի դուս ելլայ, հրամայեցէք կը-սէ մայրը . . . :

Ու վեր կելլան, մինչ տիկին մայրը ու-րախութենէն կը մօլտայ, քա ծուռ լեզու-նեւուն մէջը պիւէ արխ է ըրեր տղուն չանը չէօհրէթը . . .

Տեսարանը աննկարագրելի է վերը՝ միւ-սիւ տանթիսդին սենեակը : Մեր Պաթիսդը, ի տես իր երբեմնի հոմանուհիին, որուն հետ կենակցած էր Բարիզ, և որուն հազարներով ալ ֆրանք պարտք ունէր, ալ չուխալի կը փոխուի ու կսկսի դողալ :

— Պղաւօ՛ մօն վիէօ . . . է վու քղու-ալիեէ քը փը նը սուի բա քարասլը տը թաթղաբէ՞ . . .

— Բաղաօն մա չէղի, է փը թը տըմանտ պիէն էքսքիւղ . . .

— Ծօ՛ եւվրուս, կնկանը հետ լաֆի տալմիշ ըլլալուդ թէզ վարի ազատէ զավալ-լըն, կըսէ միամիտ մայրը, որ չէր գիտէր գլխուն գալիքը :

— Խնդդեմ մայր . . . քիչ մը մեղի մի-նակ ձգեցէք . . .

— Հա ամա տղաս, պէլքի կնիկը կը քաշուի կէնճ տէլիսանլըի մը հետ մինակ մնալու, կուզես նէ սանկ մէկ քէօչէն նըս-տիմ . . .

— Բուդ լ'ամուդ տիւ սիէլ . . . խնդդեմ, հեղացէ՞ք . . .

— Էյ բէք աղէկ ամա վայլում պան չէ օղլում, աս պանը օռթան ելլա՛յ նէ բուլ-լուխ բուլլուխ կընեն քեզի, ըսե՛մ տէ . . . : Ու դուրս կելլայ սենեակէն :

Ներսը եւրոպայէն մինչեւ հոս, իր հոմա-նիին տունը գտնուող զիլի մեքուսին հետ ժամերով կը խօսակցին, կը սրտնեղին, կը պոռան, այնքան ատեն որ՝ դուրսը տիկին մայրը կասկածելով դրանք մօտէն կը ձայնէ :

— Պաթիսթա եւվրում, աղապային էօռ-տէկը պերե՛մ քի մէջը թուքնէ . . .

— Ո՛չ, ո՛չ, դեղ չի լմնցաւ . . .

— Քա երկու աշկը քէօռնայ, ատ ի՛նչ անաճ աղբա է եղէր քի, երկու սահաթ է չեկար կոր . . . չօգ չէ՛յ . . . ըսելով իր ա-մուսնոյն՝ Միքայէլ աղայի սենեակը կերթայ :

— Չես ըսեր, ներսը ծուռ լեզու կէնճ մը եկեր է, երկու սահաթ է պիր միւնքիւն չի կրնար կոր քաշէր . . .

— Քա պաշխա պան չըլլայ, աշկդ պաց, տղան կուլիսէ չի հանեն . . .

— Չէ՛ . . . մրսի վրան, մայիս չընօղի կըլմանի կոր, ամա տղաս ալ տեսնալուն պէս ըռէկ ըռէնկ եղաւ սանքի . . .

— Քա սէրսէ՛մ, օտայէն աօղին մի գար, տիխաթ ըրէ, անոնք կետի սատանաներուն պէս են, աշկիդ չուսը չէլմիշ կընեն . . .

— Աղէկ ըսիր, մէյմը նայիմ ըսելով երբ յանկարծ դուռը կը բանայ

.

— Պաթիսդ . . . ա՛հ մօն ամո՛ւղ . . .

— Ժիւլիէթ . . . փը դատօ՛ղ . . .

Շա՛ր . . . շո՛ւր . . .

— Մօ՛՛ Բաթխաթա՛ ... ամօթ չէ՛ ծօ, միւշտէրիին ատանկ բան կընեն ... կըսէ մայրը՝ յանկարծակիի եկած ...

— Մա՛յդ ... նեղէ՛ ...

— Նասը՛լ նեղէ ... ի՛նչը նեղէ ...

— Բազտօ՛ն ... մա՛յդ ... այս մատամբ եկած է Բաղրիզէն, որպէս զի զիս տեսնայ, զիս շատ կը սիրէ ... :

* * *

Քիչ վերջը Պաթխաթ և մէթոէսը դուրս կելլան տունէն, որպէս զի Ֆրանսուէիին աւարթուման մը վարձէ ի հարկէ ստիպեալ, և առանց կռահել տալու իր ծնողաց։ Մինչ ասդին Միքայէլ աղա կը հարցնէ,

— Ակուան քաշեց, քա էպրո՞ս ...

— Խելքս չի հասաւ աս միւշտէրիին ...

— Ինծի կուգայ քի, մերինը անոր ետ տունը մէկը քաշէր էր, եկաւ բիւթիւն բիւթիւնէ քաշեց առաւ մնացածը, տա էօռտէկը լուայ տէ կէնէ առջի պէս քառեօլայիս տիպը դիր կընիկ, մանչ զաւակը անանկ է, նէ քուկդ է նէ իմս, իլլա էլ ալէմինը ... :

ԼԻԼԱ

ԽԵՐԸ ՏԵՍ

— Այն օրէն՝ երբ օրինաւորապէս ու կանոնաւորապէս չինուած պարարտ կտակ մը սկսաւ ծածկուիլ ու ծեծուիլ երկը հանելու համար, ալ խերը տես կտակակատարներուն։

— Այն օրէն՝ երբ յարգելի բօխչիները ինքզինքնին ուէջլամ ընելու համար սկսան հրապարակաւ թերթերու մէջ իրար պարսաւել ու իրարու սխայը հաստատելու ջանքեր ընել, ալ խերը տես ժողովուրդին բօխչիներու վրայ ունեցած համարումին։

— Այն օրէն՝ երբ խաթեր համար պօզկեգիններ, քեմպիներ ու քեմաթ-գալիսներ եւայլն եւայլն սկսան քահանայ ըլլալ, ալ խերը տես կղերականութեան։

— Այն օրէն՝ երբ կարգ մը անպիսի ալ սակայն մազահոծ ու վարսաբազում զիւպպի շրջանաւարտներ, պէս պէս միջոցներով յա-

ջողեցան Ուսումնական Խորհուրդէն մէկ մէկ ուսուցչական վկայական ձեռք ձգել. ալ խերը տես ուսուցչութեան։

— Այն օրէն՝ երբ մանկավարժական դերութեամբ մեր պղտիկները թեւերնին ետեւնին կապած սկսան համարձակօրէն բարեւել իրենց դաստիարակները, ալ խերը տես մեծերուն հանդէպ պէտք եղած ակնածանքին։

— Այն օրէն՝ երբ եկեղեցւոյ մէջ գտնուած տասը ժողովուրդին դէմ քսան քապալս շրջագայիլ սկսաւ, ալ խերը տես եկեղեցւոյ մէջ ժողովուրդին։

— Այն օրէն՝ երբ դպրոցական դասագիրքերը Ֆրսքիսի պէս լեցուեցան հրապարակ, ու ամէն տարեշրջանին և կամ դասատուաց փոփոխութեան հետ դասագրոց փոփոխութիւնը սկսաւ, ալ խերը տես ծնողքներուն քեմին։

— Այն օրէն՝ երբ սովորական եղաւ նշանածներու առանձին երկայն պոստաներ կատարել, ու նոյն իսկ առանձին զբօսատեղիներ նստիլն ու ճակարանելը, ալ խերը տես ամուսնութեան։

— Այն օրէն՝ երբ ածուռը, քառէն ու քեֆօլքէն գեղեցիկ սեռէն ընդունուեցաւ, ու արդուզարդի իբր անհրաժեշտ պէտք գործածական եղաւ, ալ խերը տես պարկեշտութեան։

— Այն օրէն՝ երբ պսակները եկեղեցին կատարել որոշուեցաւ (որով կառապանները մէկ մէկ տունի, իսկ արդուզարդի վաճառականները մէկ մէկ աբաղքովանի տէր եղան), ալ խերը տես խնայողութեան։

— Այն օրէն՝ երբ ես, դու, նա, մենք, դուք, նոքա, սկսանք յօդուածագրութեան, ալ խերը տես գրականութեան։

— Այն օրէն՝ երբ էրիկ կնկան մէջ սկսաւ տեղի ունենալ կազ ու կոխ, ծեծ ու փեթ, հայոյանք ու լուտանք, ալ խերը տես մեծ «ԱՅՈ» ներուն։

— Այն օրէն՝ երբ ռասքիսին, պօյպիսն ու փուսթայիս գիւտը եղաւ, ալ խերը տես գեղեցկութեան։

— Այն օրէն՝ երբ սիրտդ տուիր սիրտդ սիրած օրիորդի մը, ալ խերը տես սրտիդ։

ՌՈՍՄԱՆՈՍ

= Անսովոր բան...

= Եւ կամ խնդալս արթնցնելու համար, որ խուրպաղի մը պէս թմրած է, երբ ըսես թէ՝ «Մեր բանաստեղծներէն Մերութան Պարսամեան, որ բանաստեղծութիւններ չի նկուռն համար բանաստեղծ է, այո՛ այդ մեր բանաստեղծներէն Մերութան Պարսամեանը, երբ իր բանաստեղծութեան գրքին վերջին Ֆոնմայի տպագրութիւնը կը գիտէ եղբւր մեքենային մօտը կեցած, յանկարծ, մեքենային թուղթ տուողը, մեր բանաստեղծներէն Մերութան Պարսամեանը թուղթ կարծելով մախասներուն տուեր է, և մախասներն ալ չնայելով որ՝ մեր բանաստեղծներէն Մերութան Պարսամեանի նետ է գործերնին, առեր գլանին տակը տարեր և միւս կողմէն դուրս տուեր են... տպագրուած»։ Ես նորէն չը պիտի խնդամ։

= Տա-տա-տա... րօ-րօ-րօ... րի-րի-րի... նա-նա-նա կ'ընէ բան։

= Այդ այլափոխեալ «տարօրինակ բան»ը դիտմամբ ըսիր որ խնդամ և նոյն իսկ եթէ ըսես որ «Գում գաբու, Արքատեան սոխակ մը, Բաաղամու աւանակ մը, կամ պարզ բառով էջ մը, որ զուարէն համար էջ կը կոչուէր, կատգեր է և իր առջեւի երկու ոտքերը փառաւորապէս ճաշակելէ եւ մարսելէ ետքը մեռեր է՝ ըրած որկրամոլութեան վնասը տեսնելով»։ Ես նորէն չպիտի խնդամ։

= Թօհաֆ բան։

= Նոյն իսկ, երբ մէկը դէմ խնդայ, ինծի անանկ կուգայ որ ան կուլայ ու ես ալ անոր նայելով կսկսիմ լալ...

= Թօ-թօ-թօ-հաֆ բա-բան...

= Ձեռքերդ բա՛ց սիրելի բարեկամս, որ լալով գիրկդ իյնամ։

= Թօ-թօ-հաֆ բա-բա-բան...

= Բայց անգամ մը բաց ձեռքերդ որպէս զի օրինակը տամ...

= Թօ-թօ-թօ-թօ-հաֆ բան.

= Ամէնէն թօհաֆը կայ, երէկ համբաւաւոր կատակերգակին Ահմէտ Ֆէհիմ է-ֆէնտի խումբին առջեւ երբ ամէն մարդ ճղակտոր կըլլար խնդալէ, ես ասդին, թաշկինակս աչքերուս հէօնկիւռռռո հէօնկիւռռռ կուլայի...


= Թօհաֆ բա-բա-բա-բան.

= Եւ ամէնէն թօհաֆը այն էր որ խնդալէն կուլայի.

= Թը-թը-թօ-թօ-հը-հը-հօ-հօ-հաֆ ֆ ֆ ֆ բը-բը-բա-բան...

= Եւ ամէնէն թօհաֆը դիտե՛ս ուր կը վերջանայ, յաջորդ թիւով մեր առաջին սըրըքաուսները սկսելուն՝ եւ սա շարաւթանութիւններուն տակը ստորագրութիւնը գնելուդ մէջ...

ԱՆՄԵՌՈՒԿ



ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ՏԵՏՐԱԿԷՆ



ՊԱՏՐԱՆՔՆԵՐՍ

Սա ցուրտին, կը պատահի որ՝ բալթօյիս օձիքը վեր քաշեմ, օձիքիս ծայրը ականջներուս կը դպչի եւ ճամբան քալած ատենս ինծի անանկ կուգայ որ՝ տասը ոսկինոց փլւթիլ բալթօ մը հագած ըլլամ, և որուն ստենները համբոյր կուտան ականջներուս, ու այն ատեն, պարզ բալթօյաւոր մահկանացուները դիտելով երանի կուտամ ինծի։

* * *

Մեղրալուսին։ Ամուսնացողները այս բառը արտասանած ատեննին մատերնին կը լիզեն։ Անցեալ գիշեր ես ալ մեղրալուսին համը նայեցայ առանց երկար բարակ մեծ ալյոս արտասանելու։ Սիրելիս, տուփ մը մեղրաուի և լուսնին նայելով սկսայ ուտել. ահաւասիկ եղաւ մեղրալուսին, բայց այս բանին նոյնիսկ լուսինը ծիծաղեցաւ։

* * *

Ամուրի եմ ու թեւիս վրայ ծանրացող ուհի մը չունիմ, բայց եւ այնպէս ունիմ... բարսքսիւ մը՝ որ ամառ օրերը թեւիս վրայ կը ծանրանայ, ու ինծի անանկ կուգայ և կզգամ ալ քնքոյշ էակի մը ներկայութիւնը քովս ի վեր ու կըսեմ մոզմ ձայով. «խուշս, համբուրելի էակ» մինչ մօտէս անցնող մը կըսէ. «կնիկ չգտա՞ր հարֆ նետելու...»։

ՄԻԱՄԻՏ

ԱՆՈՆՔ ՈՐ ՊԱԳՆԵԼԴ ԿՈՒԳԱՅ ...

Դռնապանը՝ որուն կը հարցունես « Տիկին Ս...ն (դժնեքնութ մեծ մօրաքոյր մը) տո՛ւնն է» և ան կը պատասխանէ «հիմա դուրս ելաւ» :

= Վերաբոյժը՝ որ ստիպողական գործով մը ստիպուած՝ քենէ կը խնդրէ որ իրեն շաբաթ մը վերջը այցելես :

= Գլխարկավաճառը՝ որ կը մրմնջէ զգացուած երեւոյթով մը թէ «երբէք գլխարկ մը քեզի այսչափ չէր վաճած» :

= Զիւղարութեան ուսուցիչ մը՝ որ քաղցրութեամբ քեզի կը յայտնէ թէ՝ մարդ ուզած ասեմը միայն ձիէն վար կ'իջնայ :

= Անծանօթ մարդը՝ երբ կը տեսնես որ ան՝ հանրակառքին մէջ՝ բացայայտ հաճոյքով մը քու գրած մէկ յօդուածդ կարդալով զբաղած է :

պատէ — առանց մտիկ ընելու — քու մանրավէպիդ վերջանալուն, որպէս զի իրենը պատմէ :

= Այն մանչը՝ որ կը շարունակէ ծառայելու շատ մը մարդոց՝ որոնք քենէ վերջը եկած են թատրոնին վեսքիւր :

— Թղթատարական այն պաշտօնեայն՝ որ անտարբերութեամբ քեզի կը յայտնէ թէ՝ իրեն ներկայած ստիպողական նամակդ՝ ալ այսօր չ'երթար :

= Այն սրամիտ մարդը՝ որ կը յաջողի խնդացնել քու սիրած կինդ :

= Երկուշաբթի առտուանցով տուփը ձգուած քահիւսիւ նամակ մը՝ որուն մէջէն սիրային ոտանաւոր մը կ'ելլայ ... կը ծեծեն չէնէ թէփէլէմիշ կընէս տէրը. (Ծ. Խ.) :

ՎԷՄԵՆ

ԶՈՒԱՐԹ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԱՆՈՆՔ ՈՐ ԾԵԾԵԼԴ ԿՈՒԳԱՅ ...

Այցելութեան ատեն պզտիկ մանչը՝ որուն մայրը զքանչելիօրէն կը հմայէ քեզ՝ և որ քեզի կ'ստիպէ անպատճառ որ իրեն հետ խաղաս :

= Դերձակը որ՝ քեզի դիտել կ'ուտայ թէ՝ անցեալ տարուան վրայ քիչ մը գիրցած ես, թէպէտ դուն նիհարնալու պէտքը կը դառնաս :

= Այն մարդը՝ որ կը փռնքտայ այն միջոցին ուր՝ ուշադիր ժողովի մը լռութեան մէջ, զուարճալի խօսք մը պիտի զետեղէիր :

= Այն բարեկամը՝ որ փողոցին մէջ, կընոջ մը հետեւիդ անտեր է :

= Թիւնէլի պաշտօնեայն՝ որ պաղարեամբ կը գոցէ քու առջևդ մոտքին դուռը, այն պահուն՝ որ վակոնը — որուն կրնայիր հասնիլ — ճամբայ պիտի ել' է :

= Ամբիթատրոնին մէջ այն դրացինդ՝ որուն բազուկը կը յամառի քու կրնիդ վրայ ելնելու :

= Ազնիւ բարեկամդ՝ որ չուելու որոշումը չիտար այն միջոցին՝ ուր կը գուշակես թէ՝ նի փողոցի դռան դանգակը պիտի զարնէ :

= Փայլուն խօսողը՝ որ անհամբեր կ'ըս-

լիլԱ՝ գոհացում տալու համար իրեն համակիր բազմաթիւ ընթերցողներուն, կը փութայ հրաւիրել անոնք՝ որոնք կը փափաքին ուղղել հարցումներ իրեն, ըլլան՝ ընտանեկան, ընկերական, գրական, զաւեշտական, երգիծական, գիտական եւայլն, որոնց պիտի պատասխանէ նոյն այս սիւնակներուն մէջ : Ասով կը յուսանք թէ՝ ընթերցող ժողովուրդը նորօրինակ զրօսանք մը պիտի ունենայ և թէ հարցումները ուղղուներ գոհացում տուած պիտի ըլլան ստացած զուարթ պատասխաններովն :

Ուրեմն, կսպասենք նոյն իսկ երկուշաբթիէն սկսեալ թէ Կ. Պոլսէն և թէ գաւառներէն գալիք հարցումներուն, որոնց անմիջապէս պիտի պատասխանուի խիստ ծիծաղաշարժ և սրամտօրէն :

Օն, ըսող բերաններ, սրեցէք ձեր ականջները :



ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԵՐԱ. — Հոս Հայ-Լայն սալօններու մէջ գիշերները բնաւ վառարան կամ քովինէ չեն վառէր կոր, չնորհիւ ակեմի բօքսին, որուն աղղեցութեան տակ քրտնելու աստիճան տաքութիւն կը զգան կանաչ սեղանին շուրջը: (Օսկիններն ալ ալէֆի գոյն ունին եւ... սուտ չէ այս լուրը. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Տեղացող առաջին ձիւնին ի տես՝ Շիչիի կողմը կարգ մը հորպիլիպիւպօմ միւսիւններ և օրիորդներ կը պատրաստուն ձիւնագնդակի խաղին: (Որուն հետեւանքը պիտի ըլլայ անշուշտ ոսկեգնդակ և... պէպէտքագնդակ... Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Ծանօթ վիթիւրօղ ջութակահարը, տեղւոյս բօքսալընը ձգելով՝ Գաւը գիւղի լոսօլընը կրուեցաւ: Կըսուի թէ ձեռքի ջութակին համար մասնաւոր ֆայթօն մը բռնէր է գացած օրը: (Երբ հաւան սերթ գալով դառնալ ուղէ, Լիլա՝ իր անձնական կառքը տրամադրելի ընել կը խոստանայ. Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Ճեմարան վարժարանի յատակադիծը պատրաստելու համար Բարիզի, Լօնտօնի, Նիւ-Եօքքի, Բէքլինի և Ճարնի ճարտարապետներուն լուր տրուեցաւ պատկանեալ մասնախմբին կողմէ:

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Ամիսէ մը ի վեր հոս ջութակի ճգրտուկ մը կայ, որուն ձայնէն նախ ամառուան մծեղները, յետոյ Սկիւտարի ածուխի կառքերը յիշելով հանդերձ՝ անհանգիստ կըլլանք կոր:

ՍԿԻՒՏԱՐ. — Մենք հոգի չունէինք այսքան տարիներէ ի վեր մարդասիրաբար կըլիցինք, կտոր մըն ալ դուք քաշեցէք:

ՍԱՄԱԹԻԱ. — Արմանքով և զարմանքով կարդացինք լրագիրներուն մէջ թէ, հինգ տարեկան տղայ մը 100 տիրէմ օդի մէկ ումպէն խմելով մեռեր է...: Ամէն մէկ ընթերցողէն կը խնդրենք որպէս զի անգամ մը փորձեն 5 տիրէմ մէկ ումպէն և առանց ջուրի կուլ տալ, ուր մնաց հինգ տարեկան տղեկին 100 տիրէմ մէկէն ճնկելը...:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Երուսաղիմայ վարդապետին ձեռքէն փախչող երեք քոյրերուն մէջ ինչիւր է ծագէր թէ՛ ինչո՞ւ այս պարագան թերթերու մէջ հրատարակուեցաւ, եթէ պիտի հրատարակուէր ինչո՞ւ վարդապետին խաթը խոշ չըրած դարձանք: (Փորձանք... քուրիկս ինչ ընենք. Ծ. Խ.):

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԷՏԻՐՆԷ, Գուլումեան հե. — Կարծեմ թէ ամենայն ճշգրտեամբ գործադրեցինք ձեր առաջարկը, ինչո՞ւ մեր արդար իրաւունքը չէք զրկէր: Այս բօսթային կապասենք:

ԷՐՋՐՈՒՄ. Փամուհեան հե. — Ձեր թերթերը օրը օրին ղրկուած են և կը ղրկուին ալ, եթէ ուրիշ թերթի ալ բաժանորդ ըլլալ կուզէք կրնաք ըլլալ առանց զմեզ զբաղեցնելու ձեր մտացածին քնիւհներովը: Մեր թերթը մուրացկանութիւն չգիտէր, ուզողը թող կարդայ, բռնի բաժանորդագին մուրալու նոր սխաթէմը մենք չենք գործադրէր, և պէտք ալ չունինք:

Նոյնպէս կը խնդրենք ամէն այն բաժանորդներէն՝ որոնց հասցէին դրուած էր թէ պայմանաժամին լրացած է, հաճին երկտողիւ մը ԴԱԴԵՑՈՒՑԷՔ գրել, այս կուզենք միայն մեր հաշիւներուն ճշգրտեման համար:

Վերջին վայրկեանին ստացանք յօդուած մը Մեքակ ստորագրութեամբ, Խնձեհան էֆ. ի և Թէոդիկի գրավէճին առթիւ, զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

Արսօնսկր ԱՐԲԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՐԵԱՆ

Պապը-Ալի Գաւսէսի քիւ 52.

ԱՐՍԵՆ ԼԻԻԲԵՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

Մինչև Գլաբէյրօն փողոցը գացին և մինչդեռ Շօլմա կը քննէր 25 թիւ յնակարանին ճակատը՝ յարեց.

— Ի՞նչ պատճառ առաջնորդած է Արսէն Լիւբէնը զատելու Պ. Տէթինանի տունը, ի՞նչ կապակցութիւն հաստատուած պէտք է ըլլայ:

Առաջին անգամ ըլլալով Վիլսօն, ինքնիրեն կասկածեցաւ իր հանճարեղ պաշտօնակիցին կարողութեանը վրայ. ինչո՞ւ ան միշտ կը խօսէր և քիչ կը գործէր:

— Ինչո՞ւ, աղաղակեց Շօլմա, պատասխանելով Վիլսօնի մտածումներուն, որովհետեւ տա Լիւբէն սատանորդէին հետ պարապօթեան մէջ կ'աշխատիս, դիպուածով, և փոխանակ ճշմարտութիւնը դուրս հանելու՝ պէտք է նախ ուղեղդ դուրս հանես, հասկցա՞ր:

— Այո՛, հասկցայ, յարեց Վիլսօն, այսինքն սա՛ ըսել կուզէք կոր որ քիչ մը չբօթած էք...

Հազիւ արտասանած էր այս խօսքը, երբ ետ ցատկեց. աւազով լեցուն պարկ մը ինկած էր իրենց ստեղծուած առջեւ եւ կրնար իրենց վրաս պատճառել իթէ չքաշուէին:

Շօլմա գլուխը վեր վերցուց. իրենցմէ վեր, քանի մը գործաւորներ կ'աշխատէին լաստակի մը վրայ՝ որ հինգերորդ յարկին պատշգամէն վար կախուած էր:

— Է՛հ, բախտ ունինք եղեր, քաջ մը նալ եթէ առնէինք, տա անճարակներուն պարկը գանկերնուս պիտի ուտէինք:

Հետեւեալ օր փոփոխութիւն մը չեղաւ: Հանրի Մարթէն ծառուղիին նստարաններէն մէկուն վրայ նստան, ուր հետեւեալ միջադէպը պատահեցաւ.

Պարսի մը ձին, ծառուղիին քովէն կը յառաջանար. ձին ճամբէն շեղեցաւ և եկաւ զարնուեցաւ անոնց նստարանին, ա-

նակ որ ձիուն գամակը՝ Շէրլօքի ուսին զարնուեցաւ ուժգին:

— Է՛հ, է՛հ, հեգնեց զիտելով պարոնը — որ ձիուն հետ կը պայքարէր, և որ քառասըմբակ մեկնեցաւ յետոյ — քիչ մը ևս ուսս պիտի ջախջախուէր:

Այս պղտիկ միջադէպը իրեն բաւական մտածել տուաւ: Ճաշի ատեն բերանը չի բացաւ: Ժամը հինգին, երբ Գլաբէյրօն փողոցը հասած էին ու հարկւր քայլ առած, երբ Շօլմա յարեց խտուրթեամբ.

— Վիլսօն, երբէք եզրակացութիւն մը չէք հանէր երկու արկածներէն որոնցմէ խուսափեցանք:

— Անտարակոյս:

— Որո՞նք են:

Վիլսօն ճակատը քերեց:

Հէրլօք Շօլմա շարունակեց.

— Երէկ, Վիլսօն, աւազով լեցուն պարկը որ գրեթէ զլսուենուս ինկաւ՝ Արսէն Լիւբէնի մէկ գործակիցէն նետուած էր:

— Կարելի՞ է...

— Այս առաւօտ, Վիլսօն, ձին որ գրեթէ վրանիս թաւալեցաւ՝ Արսէն Լիւբէնի մէկ գործակիցէն հեծնուած էր:

Նոյն պահուն երբ խօսակցելով կը քալէին, երեք երիտասարդ գործաւորներ որոնք կ'երգէին և իրարու ձեռքէ բռնած էին, եկան Շօլմաի և Վիլսօնի զարնուեցան և ուղեցին ճամբանին շարունակել առանց ձեռքերնին իրարմէ զատելու: Շօլմա անոնց երկուքը հրեց պղտիկ կռիւէ մը ետքը, և անոնք ալ առանց զիմադրելու հեռացան իսկոյն:

Շօլմա տեսնելով որ Վիլսօն պատի մը կրթնած է, ըսաւ.

— Ի՞նչ ունիք բարեկամս որ տոգոյն էք: Վիլսօն թեւը ցուցուց որ թող մը կախուած էր, և կակաղեց.

— Չեմ գիտեր ինչ ունիմ, թեև իս վերայ ցաւ մը կայ, և հակառակ իր ըրած ջանքերուն չէր կրնար ձեռքը շարժել: Հէրլօք անոր ձեռքը շօշափեց, յետոյ մօտակայ դեղարան մը տարաւ զայն՝ ուր մարեցաւ Վիլսօն: Դեղագործը ու իր օգնականները հասան, ստուգեցին որ թեւը կոտրած էր և անմիջապէս հանուեցուցին զայն որ ցաւէն սկսաւ ոռնայ:

— Լմեցա՛ւ, Լմեցա՛ւ, կ'ըսէր Շօլմս, որ անոր թեւը բռնած էր, քիչ մը համբերութիւն, իմ վաղեմի բարեկամս, հինգ կամ վեց շաբաթէն ամէն բան կ'ազէկնայ:

Յանկարծ ընդմիջեց, թեւը թողուց — ինչ որ Վիլսօնի անանկ ցաւ մը պատճառեց որ տարբազոր նորէն մարեցաւ — ճակտին զարնելով ըսաւ.

— Վիլսօն, զաղափար մը ունիմ, դիպուածով է, բայց այո այդ է, ամէն բան պիտի բացատրուի...

Եւ ձգելով իր բարեկամը, դուրս վազեց ու մինչեւ 25 թիւ տունը գնաց:

Տանը դրանք վերելը եւ դէպ ի աջ, քարի մը վրայ հետեւեալը արձանագրուած էր. Skupանթ, Գարսարապէս, 1875

25 թիւ տունին վրայ միեւնոյն արձանագրութիւնը:

Կառք մը կ'անցնէր:

— Կառապա՛ն, ըսաւ Հէրլօք, Հանրի Մարթէն ծառուղին, թիւ 134:

Բօմբ փողոցը անցած ատեն, խիստ անձկութեան մէջ ինկաւ: Լաւ տրամաբանած էր, քիչ մը ճշմարտութիւնն էր որ տեսած էր ինք:

134 թիւին բնակարանին քարերէն միոյն վրան ալ արձանագրուած էր. Skupանթ, Գարսարապէս. 1874

Այդ տանը քսվի կալուածին վրայ նոյն արձանագրութիւնը:

Իր յուզումը այնքան սաստիկ էր որ, քանի մը վայրկեան կ'եցաւ կառքին մէջ՝ սարսուռով ուրախութենէն: Վերջապէս, պզտիկ նշոյլ մը կը դողդրդար խաւարին մեջ:

Նամակատան մը մէջ, հեռաձայնով հաղորդակցութեան մօտաւ Գրօզօնի կոմսուհիին հետ. կոմսուհին պատասխանեց թէ՛

Գրօզօնի դղեակը ճարտարապետ Լիւսիէն Տէսթանտէն, 1877ին:

Տէսթանտ, Լիւսիէն Տէսթանտ, այս անունը իրեն անծանօթ չէր: Ընթերցատուն մը մօտաւ, կենսագրական նոր բառգիրք մը ուզեց ու պրպտելով հետեւեալը գտաւ և ընդօրինակեց.

«Լիւսիէն Տէսթանտ, ծնած 1840ին: Հըռովմի գեղարուեստական մեծ պարգեւը: Պատուոյ Լէգէոնի պաշտօնակալ: Հեղինակ ճարտարապետական գնահատուած գործերու և այլն»:

Այն ատեն դեղարան գնաց և անկէ հիւանդանոց ուր փոխադրած էին Վիլսօնը: Տանջանքի անկողինին վրայ, թեւը խողովակի մէջ առնուած՝ կը զառանցէր Վիլսօն:

— Յաղթութիւն, աղաղակեց Շօլմս, թելի մը ծայրը ձեռքս կը գտնուի Վիլսօն:

— Ո՛ր թելին ըսաւ Վիլսօն:

— Այն որ մինչեւ վերջին կայանը պիտի տանի զիս, Վիլսօն, քակեցի այն խորհրդաւոր կապը՝ որ կը միացնէր իրարու խառնեալ կնոջ զատ զատ արկածները: Գիտեմ թէ՛ երեք բնակարանները շինուած են միակ ճարտարապետէ մը: Գիտեմ թէ՛ նոյն ճարտարապետը, իրարու նմանող յատակագիծեր պատրաստելով, կարելի ըրած է երեք գործերու կատարումը հրաշալի երեւոյթով մը: Եւ ա՛յ ատենը եկած էր բարեկամս, ա՛յ կսկսէի համբերութիւնս կորսնցնել և արդէն չորրորդ օրն ենք:

— Տանսերորդին:

— Օ՛հ հիմա՛կ...

Կեցած տեղը հանգիստ չէր Շօլմս:

— Բայց երբ կը մտածեմ որ, եթէ այդ սրիկաները իմ թեւս ալ կոտրէին քուկինիդ պէս, ինչ ըսիր Վիլսօն:

Վիլսօն սարսուռաց այս սոսկալի ենթադրութենէն:

— Նայի՛նք, աւելցուց Շօլմս, կը մեկնիմ ահա, ամէն բանէ առաջ պէտք է Լիւսիէնի հսկողութենէն խուսափիմ: Այս ցերեկ, դէմքս փոխած ըլլալով իրեն յաղթեցի, ազատ եմ նաեւ գիշերուան մութին. յաղթութիւնը իմ քովս է ինչ որ ըլլան իր ջանքերը:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ.

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գինեւոր անմրցելի
աժանութեամբը չաճած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն փոփոխ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—14



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ՝

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

[Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ]

Ճեպոյ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Չիկաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
թոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտին:

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան քաժնեգին	50 շրջ.	Վեցամսեայ	25 շրջ.
Գաւառաց համար	»	»	27 »
Արաստահման	»	»	6 ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՏԷ՝

ՎԱԶԱՆ ՓԱՓԱՋԱՆ, Պապր-Ալի հասկսի, Աստուրեան սպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան եւ
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաքօթով եւ կամ բօլթայի փութով 20 հաւ
20 զրուշի հաշուով:

STAMPED
STAMPED
STAMPED
STAMPED

PI 84